ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԳԵՐԱՍԻՄԻ

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Քննչական գործունեության օրինակով)

ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Մելսիկ Պարգևի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
ԱՎԱՆԵՍՅԱՆ Հրանտ Միքայելի

հոգեբանական գիտությունների թեկնածու
ՓԻԼՈՍՅԱՆ Սուսաննա Միհրանի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի մայիսի 25-ին, ժամը 12:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ- ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 25.04.2017 թվականին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Կ. Ե.Վարդանյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Քսանմեկերորդ դարի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձությունների սրընթաց զարգացումների ու պետությունների միջև ծավալված ռազմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական մրցակցության ու դրանց արդյունքում առաջացող լարվածության, սղաճերի պատճառով Ժամանակակից հասարակություններում առաջացել են խորը ճգնաժամեր: Մյուս կողմից՝ հասարակարգերի տարբեր ուղղություններում կատարվող գլոբալ փոփոխությունները տարբեր կառույցների, հիմնարկությունների ու մարդկանց միջև առաջացնում են առևտրա-տնտեսական, սոցիալ-հոգեբանական լարվածություն, որի արդյունքում առաջանում են տարբեր բնույթի կոնֆլիկտներ: Այդ իսկ պատճառով հասարակության ներսում, ինչպես նաև մարդկանց միջանձնային փոխհարաբերություններում գնալով ավելի ու ավելի հրատապ է դառնում խնդրահարույց իրադրություններում մարդկանց կոնֆլիկտային վարքի ուսումնասիրման հիմնախնդիրը: Կոնֆլիկտային իրադրության և նմանատիպ վարքի հաղթահարումը հիմնականում կախված է դրանց հնարավոր պատճառների բացահայտումից և հաղթահարման արդյունավետ միջոցների կիրառումից:

Մարդու կյանքում կոնֆլիկտը մեծ դեր ունի ոչ միայն նրա ինքնիրացման, զարգացման համար, այլև մարդկանց, հասարակության հետ հարաբերությունների կառուցման, դրանց կանոնակարգման և գործունեության մեջ հաջողությունների հասնելու և առհասարակ ամբողջ կենսագործունեության ընթացքում: Միջանձնային կոնֆլիկտների հիմնախնդիրը անդրադառնում է կենսագործունեության ամենատարբեր ոլորտներին: Հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական բարդ գործընթացները պայմանավորում են միջանձնային հարաբերությունների բնույթը, քանի որ սոցիալ-հոգեբանական գործընթացներով են որոշվում ինչպես առանձին անձանց, սոցիալական խմբերի, այնպես էլ ողջ հասարակության բազմաբնույթ հարաբերությունների բնութագրերը: Իրավական հոգեբանության տեսանկյունից՝ ժամանակակից կյանքի սրընթաց զարգացումների, աճող հակասությունների, մրցակցության ու կյանքի թանկացումների պայմաններում առաջացող կոնֆլիկտների հիմնախնդրի ուսումնասիրման անհրաժեշտությունը առավել քան կարևոր նշանակություն է ձեռք բերում: Հետևաբար՝ քննիչի մասնագիտական կարողությունները /կոմպետենտությունը/ զարգացնելու, աշխատանքային արդյունավետությունը բարձրացնելու, առողջությունը պահպանելու, նպատակով նրա գործունեության հոգեհիգիենայի պահանջների ապահովման գործընթացի կազմակերպումը դառնում է արդիական խնդիր:

Հետազոտության օբյեկտը: Քննչական գործունեության սուբյեկտների փոխհարաբերություններում դրսևորվող միջանձնային կոնֆլիկտային իրավիճակներն են, դրանց առանձնահատկությունները:

Հետազոտության առարկան: Կոնֆլիկտային իրավիճակում քննիչների անձնային և մասնագիտական որակների, միջանձնային փոխհարաբերությունների յուրահատկությունների, հուզական ապրումների դրսևորումներն են, ինչպես նաև անձի ինքնակառավարման առանձնահատկությունների փոփոխությունները:

Հետազոտության վարկածը ենթադրություն է, որ խնդրահարույց իրավիճակներում քննչական գործընթացին մասնակից սուբյեկտների միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվող կոնֆլիկտների առանձնահատկությունները պայմանավորված են նրանց անձնային և մասնագիտական որակների ուղղորդման յուրահատուկ

արտահայտվածությամբ, սթրես գործոնների նկատմամբ քննիչի հոգեկան կայունության, հուզական վիճակների ինքնակարգավորման առանձնահատկություններով:

Ենթադրվում է նաև, որ քննչական գործունեության ընթացքում սուբյեկտների կոնֆլիկտայնության և հուզական այրման միջև գոյություն ունեցող փոխազդեցությունները ուղիղ կախվածություն ունեն քննիչի անձնային առանձնահատկություններից:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել քննչական գործունեության ոլորտում խնդրահարույց իրավիճակներում դրսևորվող և զարգացող միջանձնային կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, վերջիններիս անձնային գործոններով պայմանավորվածությունը, պատճառականությունը, ինչպես նաև՝ դրանց կանխարգելման և հաղթահարման համապատասխան միջոցների մշակումը:

Գիտական վարկածից ու նպատակից բխած՝ առաջադրվել են հետևյալ **հիմնական խնդիրները.**

1. Մասնագիտական գրականության ուսումնասիրում, քննչական գործունեության խնդրահարույց իրավիճակների համակարգում, կոնֆլիկտների տեսական հիմքերի ուսումնասիրում:

2. Քննչական գործունեության ոլորտում կոնֆլիկտների դրսևորման առանձնահատկությունների, դրանց բնութագրական փոփոխություններին նպաստող գործոնների բացահայտում:

3. Խնդրահարույց իրավիճակներում միջանձնային փոխհարաբերությունների և դրանցում գործունեության սուբյեկտների վարքային դրսևորումների, առանձնահատկությունների համակարգում:

4. Կոնֆլիկտայնության և հուզական այրման միջև առկա համահարաբերակցական կապերի, անձնային սուբյեկտիվ գործոնների ազդեցության բացահայտում:

5. Կառուցողական և ապակառուցողական կոնֆլիկտների առաջացման պատճառական կապերի բացահայտում, կոնֆլիկտների հաղթահարման գործընթացում դրանց հոգեբանական կապերի հիմնավորում:

6. Քննչական գործունեության ոլորտում կոնֆլիկտների կանխարգելման և հաղթահարման նպատակով համապատասխան մեթոդական հանձնարարականների մշակում:

7. Հավաստող գիտափորձի միջոցով կանխարգելման և վերականգնողական աշխատանքների արդյունավետության հաստատում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքեր են ծառայել անձի զարգացման և գործունեության միասնության տեսությունները (Ա.Ն.Լեոնտև, Ս.Լ.Ռուբինշտեյն, Լ.Ի. Բոժովիչ, Ա.Վ.Բրուշլինսկի), հոգեկան երևույթների սոցիալական պայմանավորվածության տեսությունները (Ս.Լ.Ռուբինշտեյն, Լ.Ս.Վիհոտսկի, Բ.Ֆ.Լոմով), հոգեբանական երևույթների նկատմամբ համակարգային մոտեցման տեսությունները (Վ.Մ. Բեխտերև, Պ.Պ.Բլոնսկի, Բ.Գ.Անանև, Բ.Ֆ.Լոմով, Ա.Գ.Ասմոլով) տեսությունները, անձնային և մասնագիտական զարգացման արժեքաբանական հայեցակարգը (Բ.Գ. Անանևը, Ա.Ա.Դերկաչ, Ա.Ա.Բոդալյով, Ն.Վ.Կուզմինա, Ե.Ա.Կլիմով, Ե.Ի.Ստեպանովա, Ա.Կ.Մարկովա, Ի.Ն.Սեմենով, Ս.Յու.Ստեպանով, Վ.Ա.Սլաստենին, Վ.Դ.Շադրիկով և այլն), սոցիալական հոգեբանության ոլորտում հայտնի փոխգործունեության և հաղորդակցման վերաբերյալ կատարված հետազոտությունների հայեցակարգերը (Գ.Մ.Անդրեևա, Ա.Վ.Բոդալյովա, Ա.Ի.Դոնցովա, Բ.Ֆ.Լոմովա, Վ.Ն.Մյասիշևա, Ն.Ն.Օբոզովա, Բ.Ֆ.Պարիգինա), կոնֆլիկտների՝ որպես բարդ իրադրության ուսումնասիրման

համակարգահիրադրային մոտեցումը (Ա.Յա.Անցուպով): Աշխատանքում իրենց արժանի կիրառությունն են գտել իրավաբանական հոգեբանության, իրավաբանական կոնֆլիկտաբանության ոլորտում կատարված հետազոտությունները, փիլիսոփայության, սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի, կոնֆլիկտաբանության հիմնարար տեսական ուսումնասիրությունները, սոցիալական հոգեբանության ոլորտում գոյություն ունեցող միջանձնային փոխհարաբերությունների ուսումնասիրման մեթոդական համակարգը, դրանցում գոյություն ունեցող կոնֆլիկտների առաջացման օրինաչափությունները, հոգեկանի ուսումնասիրման համակարգային սկզբունքները, կառուցվածքային և գործառույթային պատկերացումները:

Հետազոտության մեթոդները.

- Ա.Անցուպովի «Մոդուլային սոցիոփորձարկումը»:
- Կոնֆլիկտի իրադրային վերլուծության մեթոդիկա (հարցաթերթիկ):
- Կ.Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկան»:
- Վ.Վ.Բոյկոյի «Հուզական այրման մակարդակի ախտորոշման մեթոդիկան»:
- Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան»:
- «Կոնֆլիկտակայունության արտահայտվածության ախտորոշման մեթոդիկան»:
- Տ.Լիրիի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկան»:

Հետազոտությունները իրականացվել են երեք փուլերով, որոնցում ընդգրկվել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում, Երևան քաղաքի քննչական վարչությունում և Արաբկիրի քննչական բաժնում աշխատող 100 քննիչներ:

Առաջին փուլում /2011-2012թթ./ իրականացվել են գիտական և մասնագիտական գրականության անհրաժեշտ աղբյուրների ուսումնասիրումն ու վերլուծությունը, ատենախոսության գիտական համակարգի որոշակիացումը: Երկրորդ փուլում /2012-2013թթ./ մշակվել են ատենախոսության հետազոտությունների իրականացման ռազմավարությունն ու հետազոտական խմբերի ձևավորումը, հետազոտության մեթոդների ընտրությունը պայմանների ապահովումը: Երրորդ փուլում /2013-2014թթ./ իրականացվել են հիմնական և հավաստող գիտափորձերը: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչությունում և ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արաբկիրի քննչական բաժնում:

Գիտական նորույթը: Հետազոտական ճանապարհով բացահայտվել են քննչական գործունեության բնագավառում խնդրահարույց իրավիճակներն ու դրանցում առկա ապակառուցողական և կառուցողական կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական պատճառականությունները, սուբյեկտների անձնային առանձնահատկություններով պայմանավորված կոնֆլիկտների առաջացման բնույթը, դրանց ձևափոխումների քողարկված միտումներն ու զարգացումների ուղղվածությունը: Բացահայտված է խնդրահարույց իրավիճակներում կոնֆլիկտների ծագման, զարգացմանն ու հաղթահարմանը նպաստող անձնային գործոնների միջև առկա համահարաբերակցական կապը:

Տեսական նշանակությունը: Մեր օրերում հոգեբանական գիտությունը, ինչպես նաև նրա բնագավառները հանդիսացող կառավարման հոգեբանությունը, իրավաբանական հոգեբանությունը, հոգեբանական կոնֆլիկտաբանությունը կայացման փուլում են գտնվում: Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ

խնդրի հայեցակարգային մշակումը, և սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների հետազոտումը, քննչական գործունեության ոլորտում առաջացած կոնֆլիկտների բնույթի, ծագման և տիպաբանության բացահայտումը ևս մեկ փորձ է կոնֆլիկտի հոգեբանական հայեցակարգի համալրման համար:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքներն ու գործնական առաջադրանքներն ու հանձնարարականները թույլ են տալիս խնդրահարույց իրավիճակներում բացահայտել միջանձնային հարաբերությունների բնույթը՝ անձնային սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ կոնֆլիկտներիի ազդեցության առանձնահատկությունները, հակազդող կողմերի փոխհարաբերությունների, հոգեվիճակների, անհատական գործունեության արդյունավետության բնութագրերը, գործունեության առանձնահատկությունների, ծառայողական փոխգործունեության, մրցակցի անձնային առանձնահատկությունների ընկալման, ղեկավարության միջամտության և ներգործության դերը կոնֆլիկտների կանխարգելման ու դրանց հաղթահարման գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել քննչական գործունեության ոլորտում կոնֆլիկտային իրավիճակներում կառուցողական և կիրառական խնդիրների լուծման համար, այդ թվում նաև քննիչի անձի հոգեկան ոլորտի կառավարման, հուզական երևույթների ինքնակարգավորման հմտությունների ձևավորման համար:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովել են.

- տեսության ու պրակտիկայի միասնությամբ իրականացված հետազոտության տրամաբանությամբ, գերակա խնդիրների արդյունավետ լուծման նպատակով համալիր մեթոդների կիրառմամբ,
- գիտական հետազոտությունների կազմակերպման հայեցակարգային դիրքորոշումների մեթոդաբանական հիմնավորվածությամբ,
- առաջադրված հիմնախնդիրների լուծման վերաբերյալ հոգեբանական, մանկավարժական, սոցիոլոգիական և այլ մարդաբանական գիտությունների բնագավառներում գոյություն ունոցող առաջավոր գաղափարների գիտական վերլուծություններով,
- հետազոտության կառուցվածքային բաղադրամասերի գիտականորեն հիմնավորված տրամաբանությամբ, փորձարկվողների անհրաժեշտ քանակի և հետազոտության արդյունքների վերլուծման հիմնավորված վիճակագրական մեթոդների կուռ համակարգով,
- հետազոտության արդյունքների փորձաքննությունն ու ներդրումը իրականացվել է փորձարարական բազա հանդիսացած ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արաբկիրի բաժնում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչությունում: Հետազոտության արդյունքները պարբերաբար հրատարակվել են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում և հանրապետական գիտաժողովներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները՝

1. Քննչական գործունեության ոլորտում կոնֆլիկտները հանդիսանում են անձի անբավարարվածության թաքնված հոգեբանական կռվաններ, որոնք քննող և քննվող կողմերի համար հանդիսանում են ներքնայնացված, հիմնական հակասություններ:

2. Քննչական գործընթացի խնդրահարույց իրավիճակներում սուբյեկտների կոնֆլիկտայնությունը նեղ առումով ընկալվում է որպես կոնֆլիկտի կառուցողական հաղթահարման նախապայման:

3. Քննչական գործընթացում քննող և քննվող կողմերի վարքային բնութագրերը պայմանավորված են կոնֆլիկտի կողմերի անձնային առանձնահատկություններով, քննչական գործընթացում նրանց կողմից կոնֆլիկտների ուղղորդման և կառավարման առանձնահատկություններով:

4. Քննչական գործունեության ոլորտում կոնֆլիկտների առանձնահատկություն-ների բացահայտումն ու դրանց մեղմացման գործընթացները ուղիղ կախվածություն ունեն անձի ինքնակառավարման ու ինքնակարգավորման հնարավորություններից, որոնք օժանդակում են նաև կոնֆլիկտների արդյունավետ կանխարգելմանը:

5. Կոնֆլիկտային իրավիճակներում միջանձնային փոխհարաբերությունների և գործունեության սուբյեկտների միջև վարքային յուրահատուկ դրսևորումների նպատակաուղղված հաշվառման արդյունքում ձևավորվում են վերջնական ցանկալի արդյունքին նպաստող հաղորդակցական հմտություններ:

6. Կոնֆլիկտայնության և հուզական այրման միջև առկա համահարաբե-րակցական կապի բացահայտումը նվազեցնում է քննիչների հուզական այրման վտանգը:

7. Անձնային առանձնահատկությունների սուբյեկտիվ գործոնների ճիշտ հաշվառումը պարզեցնում է սուբյեկտների միջև կապի հաստատման, ինչպես նաև փոխհարաբերությունների վրա ներգործության աստիճանը:

8. Մշակված համապատասխան մեթոդական հանձնարարականների միջոցով, քննչական գործունեության մեջ կանխարգելվում և հաղթահարվում են բազմաբնույթ կոնֆլիկտներ:

Հետազոտության ընտրակազմը, անցկացման փուլերը և ժամկետները: Հետազոտությունները իրականացվել են երեք փուլերով, որոնցում ընդգրկվել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչությունում և Արաբկիրի քննչական բաժնում աշխատող 100 քննիչներ:

Առաջին փուլում /2011-2012թթ./ իրականացվել են գիտական և մասնագիտական գրականության անհրաժեշտ աղբյուրների ուսումնասիրումն ու վերլուծությունը, ատենախոսության գիտական համակարգի որոշակիացումը: Երկրորդ փուլում /2012-2013թթ./ մշակվել են ատենախոսության հետազոտությունների իրականացման ռազմավարությունն ու հետազոտական խմբերի ձևավորումը, հետազոտության մեթոդների ընտրությունը պայմանների ապահովումը: Երրորդ փուլում /2013-2014թթ./ իրականացվել են հիմնական և հավաստող գիտափորձերը: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչությունում և ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արաբկիրի քննչական բաժնում:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնում, ՀՊՄՀ կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ խորհրդում: Ստացված արդյունքների մասին զեկուցվել են, Սոցիալական տեխնոլոգիաներ և ժամանակակից հասարակություն VIII միջբուհական գիտա-գործնական (2011թ. հոկտեմբեր) կոնֆերանսում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված (2012թ. հոկտեմբեր) գիտաժողովում:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, 196 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 158 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ **«Կոնֆլիկտների ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմնախնդիրը հոգեբանության մեջ»** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին՝ «Կոնֆլիկտների ուսումնասիրման պատմական ակնարկ» ենթագլխում քննարկվում են կոնֆլիկտների վերաբերյալ տարբեր հեղինակների ամբողջական մոտեցումները (Թ. Հոբս, Լ.Գումպլովիչ, Գ.Ռատցենհոֆեր, Է.Դյուրքհեյմ, Ա.Յու.Անցուպով, և Ս.Վ.Բակլանովսկի, Գ.Զիմմել, Լ.Կոզեր): Երկրորդ՝ «Կոնֆլիկտների ուսումնասիրման տեսամեթոդական հիմքերը» ենթագլխում մանրամասն վերլուծվում ու մեկնաբանվում են Զ.Ֆրոյդի, Կ. Լևինի. Կ. Հորնիի, Լ. Կոզերի, Կ.Գ.Յունգի Ջ.Դոլլարդի, Լ.Դուբի, Ն.Միլլերի, Ա.Բանդուրայի, Ա.Դոնցովի, Տ.Պոլոզովայի, Ա.Կովալյովի, Է.Օռլովայի և այլ հեղինակների կողմից կոնֆլիկտի վերաբերյալ հիմնական հայեցակարգերը, պրոբլեմային իրավիճակներում ի հայտ եկած միջանձնային փոխազդեցությունները, կոնֆլիկտային իրավիճակում ներառնված սուբյեկտների, դրսևորման առանձնահատկությունները: Երրորդ՝ «Կոնֆլիկտների հետազոտության հեռանկարները իրավաբանական գործունեության ոլորտում» ենթագլխում մանրամասն քննարկվում են իրավական կոնֆլիկտները, իրավական նորմերն ու ակտերը, որոնք որոշում են անհատների, սոցիալական հանրույթների, խմբերի, ինստիտուտների, կազմակերպությունների իրավական կարգավիճակը կոնֆլիկտային իրավիճակի համատեքստում: Վերլուծում առանձնահատկությունները, որոնք բնութագրում են կոնֆլիկտները իրավունքի տեսանկյունից. դիտարկումը ոչ վերացական սոցիալական տարածքում, այլ իրական կապի մեջ գործող իրավական կառույցների հետ, ինչպես նաև հոգեբանական կոնֆլիկտները իրավակիրառական և մասնավորապես քննչական գործունեության ոլորտում:

Աշխատանքի երկրորդ՝ **«Քննչական գործունեության իրավական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները»** գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջին՝ «Քննչական գործունեության կառուցվածքային բաղադրամասերը, յուրահատկությունները» ենթագլխում ներկայացվում են քննչական գործունեության կարևոր իրավական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները.

- Կոմունիկատիվ բնույթը, որը արտահայտվում է գործունեության տարբեր օղակներում գտնվող սուբյեկտների համար սոցիալական նորմերի, էթիկայի, քաղաքավարության կանոնների, անձի իրավունքների, միջանձնային հարաբերությունների

համատեքստում, ինչը քննիչի անձի պատրաստվածությանն ու նրա գործունեության ընթացքում հասարակության, սոցիալական տարբեր շերտերի, խմբերի հետ կառուցվող հարաբերությունների արդյունավետությունն է:

- Քննչական գործունեության ներքին և արտաքին կառուցվածքային կողմերի ճանաչողությունը: Արտաքին կողմերի կարևորագույն բաղադրամասերն են գործունեության սիմվոլային միջոցները /քննչական գործունեության բնագավառի անձանց շրջանակներում կարևորագույն նշանային տեղեկատվության համակարգեր/, ներքին միջավայրի միջոցներից են՝ քննիչի անձնային ու մասնագիտական կոնցեպտուալ մոդելները, ծրագրերը, վարքի սխեմատիկ պատկերացումները, կյանքի, կենսագործունեության սոցիալական հմտությունները:
- Քննչական գործունեության հոգեբանական կողմ՝ քննիչի անձի, նրա մասնագիտական ու անձնային առանձնահատկությունների հոգեբանական դրսևորումների, քողարկված ու պահեստային հնարավորությունների վերհանում, դրանց սոցիալ-հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական զարգացումների պատճառականությունների բազմակողմանի ճանաչման գործընթացների արդյունավետության վերլուծություն:

Երկրորդ՝ «Հանցագործությունների առաջացման սոցիալ-հոգեբանական և իրավական նախադրյալները» ենթագլխում վերլուծությունները մեծամասամբ ուղղված են ամենատարբեր պայմաններում և իրավիճակներում անձի հոգեկան ոլորտի, նրա խորքային մակարդակներում տեղի ունեցող փոփոխությունների ու դրանց զարգացման միտումների բացահայտմանը, որտեղ առաջնային խնդիր է դիտարկվում հանցագործությունների գենեզիսի, նրանց պատճառականության ու զարգացման միտումների հիմնախնդրի ուսումնասիրումը: Անձի գնահատման տեսանկյունից կարևոր դեր է խաղում սոցիալ-հոգեբանական բնութագիրը, նրա սոցիալական դեմքն ու բարոյական կերպարը: Վերջինիս լիարժեք ձևավորման պահանջներից մեկը իրավական գիտակցության ձևավորումն է: Հանցագործի կամ մեղադրյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունը իր մեջ ներառում է նրա ներքնաշխարհի, կատարված արարքի հիմքում ընկած պահանջմունքների, դիրքորոշումների ու դրդապատճառների, նրա անձի հոգեբանական կառուցվածքի, մտավոր կարողությունների, իրավագիտական իմացությունների, սոցիալական դիրքի և բազմաթիվ այլ կարևոր առանձնահատկությունների հետազոտումը: Հանցագործության պահին հանցագործի հոգեկան վիճակի բացահայտումը կարևոր է հանցագործությունը որակելու համար: Մեղադրյալի հուզական ապրումների առանձնահատկությունների հաշվառումը կարող են հաշվի առնվել նրա գործողությունների գնահատման ժամանակ, որպես իրական և հավանական սպառնալիքների:

Երրորդ՝ «Քննիչի՝ որպես առանձնահատուկ պայմաններում գործող սուբյեկտի և նրա մասնագիտական առանձնահատկությունների հոգեբանական բնութագիրը» ենթագլխում վերլուծվում է առանձնահատուկ, բարդ, արտակարգ իրավիճակներում իրականացվող քննչական գործունեությունը՝ արտահայտված քննիչի անձի՝ որպես սուբյեկտի բազմաբնույթ հոգեֆիզիոլոգիական փոփոխություններով, հույզերով, փոխհատուցող այլ հակազդումներով: Քննիչի անձնային բնութագիրը պայմանավորված է նրա բարոյական նկարագրով, խառնվածքի տիպոլոգիական առանձնահատկություններով, ինչպես նաև նրա կողմից իրականացվող գործունեության արդյունավետությունը ապահովող ինչպես մասնագիտական, այնպես էլ իր գործունեության ընթացքում դրսևորվող անձնային որակներով, հուզական զսպվա-

ծությամբ, կամային ու ֆիզիկական բարձր հատկանիշներով և այլն: Այս տեսանկյունից՝ մասնագիտական և անձնային որակների բնութագրման ու քննիչի հոգեբանական հուսալիության որոշման նպատակով կիրառվում է պրոֆեսիոգրաման, որում արտացոլվում են գործունեության առանձնահատկություններին համարժեք անձնային հոգեբանական որակներ, որոնք գործունեության արդյունավետության ապահովման համար հանդիսանում են հենքային: Հաշվի առնելով քննչական գործունեության սոցիալ-հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ հետազոտություններում շեշտը դրվել է քննիչի անձնային որակների, նրա գործունեության ընթացքում հուզական այրման, կոնֆլիկտածին պայմաններում քննիչի կողմից բացասական վիճակների կարգավորման ու խնդրահարույց իրավիճակներում ինքնակառավարման գործընթացներում նրա օրգանիզմում տեղի ունեցող բնորոշ հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների ուսումնասիրություններին:

Չորրորդ՝ «Քննչական գործունեության ընթացքում առաջացող յուրահատուկ հոգեվիճակների բնութագրերը» ենթագլխում նկարագրվում են տարբեր հոգեծին և արտաքին սթրեսածին գործոնների ազդեցության պայմաններում առաջացող հուզական վիճակները, նրանց լարվածության աստիճանը, բնութագրվում են հոգեկան ոլորտում անձի արտաքին ամենատարբեր դրսևորումները և վեգետատիվ համակարգի տարբեր տեղաշարժերը, դրանց տևողությունը, արտաքին ցուցանիշները, թողած ազդեցությունը: Հետևաբար՝ Քննիչի անձի ընդհանուր և հոգեկան առողջության պահպանման գործընքացը պահանջում է հոգեբանական ուղեկցման և առողջության տեղաշարժերի վերահսկման հետևողական աշխատանքներ:

Աշխատանքի երրորդ՝ **«Կոնֆլիկտների դրսևորման առանձնահատկությունների փորձարարական հետազոտությունները քննչական գործընթացում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին՝ «Քննչական գործընթացում կոնֆլիկտների ծագման պատճառականության հետազոտության առանձնահատկությունները» ենթագլխում ներկայացված է հետազոտության մեթոդիկան: Հետազոտության հիմնական նպատակի իրականացման, խնդիրների լուծման և առաջադիր վարկածն ապացուցելու համար կիրառվել են կոնֆլիկտի իրադրային հետադարձ վերլուծության տեխնիկան, Ա.Անցուպովի «Մոդուլային սոցիոփորձարկումը», Կ.Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդը», Վ.Վ.Բոյկոյի «Հուզական այրման մակարդակի ախտորոշմանտեխնոլոգիան», Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդականհամակարգը», «Կոնֆլիկտակայունության արտահայտիչ ախտորոշման մեթոդական հնարները», Տ.Լիրիի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդները»: Քննչական գործունեության մեջ առաջացած կոնֆլիկտներին, նրանց զարգացմանը, միջանձնային հարաբերությունների բնույթին իրազեկվելու, վերջիններիս վերաբերյալ խորն ու հավաստի տվյալներ ձեռքբերելու, և համապատասխան կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու համար կիրառվել է Ա.Անցուպովի առաջարկած մոդուլային սոցիոփորձարկումը: Միջանձնային հարաբերությունները մեկ այլ՝ սուբյեկտի իրական և կատարյալ Ես-ի հայեցակարգի դիտարկման տեսանկյունից, նրանց հասարակական կողմնորոշումները ընկալելու նպատակով մեր կողմից ընտրվել է Տ.Լիրիի միջանձնային փոխհարաբերությունների ախտորոշման տեխնոլոգիան: Կոնֆլիկտային իրավիճակում քննիչների վարքային մարտավարությունն որոշելու նպատակավ մեր կողմից ընտրվել է Կ.Թոմասի «Անձի

կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման» մեթոդը (հարցախույզը համապատասխանեցվել է Ն.Գրիշինայի կողմից):

Քննիչների գործունեության վրա ազդող անձնային առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով իրականացրել ենք Ռ.Քեթթելի անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան:

Երկրորդ՝ «Քննչական գործընթացում կոնֆլիկտների ծագման պատճառականության հետազոտությունները» և երրորդ «Հետազոտության արդյունքների սոցիալ-հոգեբանական վերլուծությունը» ենթագլուխներում ներկայացվում և վերլուծվում են քննչական գործունեության ոլորտում դրսևորվող կոնֆլիկտների պատճառականության հետազոտության արդյունքները:

Անձնային առանձնահատկությունների բացահայտման համար կիրառված արտահայտված են Գծապատկեր 1–ում:

Գծապատկեր 1



	MD	A	B	C	E	F	G	H	I	L	M	N	O	Q1	Q2	Q3	Q4
Բարձր	15%	30.8	14.1	11.6	13.3	20%	7.50	25%	3.33	51.6	10.8	13.3	45%	11.6	7.50	35.8	51.6
Միջին	69.1	63.3	39.1	34.1	54.1	61.6	41.6	67.5	75.8	23.3	70%	68.3	40.8	69.1	64.1	56.6	32.5
Ցածր	15.8	5.84	46.6	54.1	32.5	18.3	50.8	7.50	20.8	25%	19.1	18.3	14.1	19.1	28.3	7.50	15.8

Ռ.Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկա»-ի (16-PF) արդյունքները

Գծապատկերից պարզ է դառնում անձնային յուրաքանչյուր գործոնի արտահայտվածության երեք մակարդակները՝ բարձր, միջին և ցածր: Արդյունքների վերլուծությունն իրականացնում ենք, հիմք ընդունելով փորձարկման համակարգում տեղ գտած գործոնները, նրանց արտահայտվածության առավելագույն չափով: Բացի B գործոնից /ինտելեկտ/, որի առավելագույն արժեքը 8 է և MD՝ /ինքնագնահատականի համարժեքություն/, որի արժեքը 14 է, մնացած 15 գործոնների առավելագույն արժեքը 12-ն է: Այսպիսով, ինքնագնահատականի համարժեքության՝ MD գործոնը հետազոտվողների 69.16%-ի մոտ արտահայտված է միջին մակարդակում, շփվողականության A գործոնը 63.33%-ի մոտ ունի միջին արտահայտվածություն, ինտելեկտի B գործոնը ցածր է արտահայտված հետազոտվողների 46.66%-ի մոտ, հուզական կայունության C գործոնը նույնպես ունի ցածր արտահայտվածություն հետազոտվողների 54.18%-ի մոտ, միջին արտահայտվածություն ունեն՝ գերակայության E 54.16%, զսպվածության F 61.67% գործոնները, հետազոտվողների 50.84%-ի մոտ ցածր արտահայտվածություն ունի կանոնակարգված վարքի G գործոնը:

Միջանձնային հարաբերությունների բնույթի, կոնֆլիկտային իրավիճակների հանդեպ հակվածության, կոնֆլիկտայնության և անձնային առանձնահատկությունների համահարաբերակցական կապը այրման սինդրոմի հետ զուգահեռաբար ուսումնասիրելու նպատակով օգտագործել ենք Վ.Բոյկոյի «Հուզական այրման

մակարդակի ախտորոշման տեխնիկան», որի արդյունքները ներկայացված են (տես Գծապատկեր 2):

Գծապատկեր 2



Ընկճախտային փուլերի արտահայտվածության ցուցանիշները

Գծապատկերից պարզ է դառնում, որ հետազոտվողների 37.50%-ի մոտ ձևավորված է տագնապայնության ախտանիշը, 30.83%-ի մոտ ձևավավորվող ախտանիշ է համարվում հոգեվնասվածքային իրավիճակների ապրման ախտանիշը, թույլ է արտահայտված սեփական անձից անբավարավածության ախտանիշն՝ այն ձևավորված չէ հետազոտվողների մեծամասնության՝ 58.33%-ի մոտ և ձևավորված է հետազոտվողների 6.68%-մոտ: Թույլ են արտահայտված նաև ինքնամփոփության ախտանիշը. վերջինս ձևավորված է հետազոտվողների 7.50%-ի և ձևավորված չէ 65%-ի մոտ, և բարոյահուզական չկողմնորոշվածության ախտանիշն՝ այն ձևավորված է հետազոտվողների 18.33%-մոտ, սակայն նկատվում է զարգացման միտում, ախտանիշը ձևավորվող է հետազոտվողների 30.83%-ի մոտ: Հետազոտվողներից 72.50%-ի մոտ գերակա է հույզերի խնայման ոլորտի, 35.83%-ի մոտ անհամարժեք հուզական ընտրողական հակազդման և 31.66%-ի մոտ մասնագիտական պարտականությունների կատարման թերացման ախտանիշը:

Հետազոտվողների մոտ առանձնացվելեն առավելագույնս դրսևորվող ախտանշանների 4 խումբ՝ բարձր, միջին, թույլ արտահայտվածություն ունեցող և գերակաախտանիշեր (տե՛ս. Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Առավելագույնս դրսևորվող ախտանշանների չորս խմբերը

Բարձր	Տագնապայնություն
Միջին	Հոգեվնասվածքային իրավիճակների ապրում, հուզական օտարում
Թույլ	Սեփական անձից անբավարարվածություն, ինքնամփոփություն, բարոյահուզական, չկողմնորոշվածություն, հուզական դեֆիցիտ, ապաանհատականացում, հոգեսոմատիկ խանգարումներ
Գերակա	Անհամարժեք հուզ. ընտրողական հակազդում, հույզերի խնայման ոլորտի ընդլայնում, մասնագիտական պարտականությունների կատարման թերացում

Տ.Լիրիի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշման տեխնոլոգիայի» կիրառման վերլուծության արդյունքները երևում են Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3



Գծապատկերից ակներև է դառնում, որ առավել բարձր արտահայտվածություն ունեն գերակայություն արտահայտող որակները: Հետազոտվողների 66%-ի մոտ բարձր է արտահայտված վարչահրամայական ոճը, իսկ 48.33%-ի մոտ՝ եսասիրությունը: Միջին արտահայտվածություն ունեն կասկածամտությունը և ագրեսիվությունը՝ համապատասխանաբար հետազոտվողների 43.33% և 38.33%-ը: Ցածր են արտահայտված, ինազանդություն, կախյալություն, ընկերասիրություն և ալտրուիզմ արտահայտող որակները հետազոտվողների համապատասխանաբար ՝ 43.33%, 60.00%, 54.16% և 55.83%-ի մոտ:

Միջանձնային փոխհարաբերություններում, կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորվող քննիչների վարքային մարտավարությունը և կոնֆլիկտի նախատրամադրվածության աստիճանի բացահայտման նպատակով կիրառված Կ.Թոմասի «Կոնֆլիկտային վարքի ախտորոշման» մեթոդիկայի արդյունքները ներկայացված են Գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4



Կ.Թոմասի «Կոնֆլիկտային վարքի ախտորոշման» մեթոդիկայի արդյունքները

Արդյունքները վկայում են, որ հետազոտվողների մոտ գերակայում է մրցակցության մակարդակը, ինչն էլ ենթադրում է կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության բարձր մակարդակ: Միաժամանակ հետազոտվողների մոտ կոնֆլիկտակայունության մակարդակը պարզելու նպատակով, կիրառել ենք կոնֆլիկտակայունության արտահայտիչ ախտորոշման տեխնոլոգիան, որի կիրառման արդյունքում ստացված տվյալները ներկայացված են Գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5



Կոնֆլիկտակայունության մակարդակի ախտորոշման ցուցանիշները

Քննչական գործունեության ոլորտում առաջացող կոնֆլիկտներին, նրանց միջանձնային հարաբերությունների բնույթին ծանոթանալու և կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով կիրառել ենք Ա.Յա.Անցուպովի մոդուլային սոցիոփորձարկումը: Սոցիոփորձարկումնունի հարցման հատվածային կառուցվածք, որը ներառում է երկու հենքային ու մի քանի լրացուցիչ չափման սանդղակներ:

Հենքային հատվածները հնարավորություն են տալիս գնահատելու հարցվողների յուրաքանչյուր վերաբերմունքը դրանց նկատմամբ /Գծապատկեր 6 և 7/:

Գծապատկեր 6



Գծապատկեր 7



Այլ լրացուցիչ հատվածները կիրառվում են ելնելով կոլեկտիվի գործունեության նպատակներից /Գծապատկեր 8, 9. 10/

Գծապատկեր 8

Գծապատկեր 9



Գծապատկեր 10



Հատվածային սոցիոփորձարկման կիրառման գործընթացը ցույց է տալիս, որ շատ հաճախ աշխատակիցները ունենում են ոչ համարժեք պատկերացումներ խմբում ունեցած իրենց դիրքերի վերաբերյալ: Նմանատիպ անհամաձայնության բացահայտումն ու կարգավորումը նպաստավոր է ոչ միայն առանձին աշխատակցի, այլև ամբողջ կոլեկտիվի համար:

Վերլուծության համար կիրառել ենք մաթեմատիկական վերլուծության հարաբերակցական միջոցը՝ ուսումնասիրվող որակների միջև կապերը բացահայտելու նպատակով: Պարզվում է, որ հետազոտության նպատակին և առաջադիր վարկածին համապատասխան, մեր կողմից առանձնացված առավել առանցքային գործոնների և կոնֆլիկտայնության միջև կա դրական համահարաբերակցական կապ: Հատկապես ուժեղ են արտահայտված բարձր կոնֆլիկտայնություն և տագնապայնություն՝ r = 0.71, բարձր կոնֆլիկտայնություն և ագրեսիվություն՝ r = 0.69, բարձր կոնֆլիկտայնություն և լարվածություն՝ r = 0.65, բարձր կոնֆլիկտայնություն և վարչահրամայականություն՝ r = 0.63 կապերը: Չափավոր արտահայտվածություն ունեն բարձր կոնֆլիկտայնություն և հուզական անկայունություն՝ r = 0.57, բարձր կոնֆլիկտայնություն և ինտելեկտ՝ r = 0.60, բարձր կոնֆլիկտայնություն և անպատասխանատվություն՝ r = 0.55, բարձր կոնֆլիկտայնություն և զգուշավորություն՝ r = 0.35 կապերը:

Կոնֆլիկտայնության և հուզական այրման համահարաբերակցական կապերը պարզել ենք Սպիրմենի հարաբերակցական վերլուծության գործակիցը կիրառելու արդյունքում: Քանի որ հուզական այրման ախտորոշման նպատակով մեր կողմից կիրառված Վ.Բոյկոյի տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ախտորոշել հուզական այրման երեք առանձին փուլեր՝ լարվածության, դիմադրողականության և հյուծման դրսևորման առանձնահատկություններն ու ձևավարվածության աստիճանը, ուստի կոնֆլիկտայնության հետ համահարաբերակցական կապերը պարզել ենք վերոհիշյալ երեք փուլերի հետ առանձին-առանձին (Տե՛ս գծապատկեր 11):

Չորրորդ՝ «Քննչական գործունեության ոլորտում կոնֆլիկտների հիմք հանդիսացող անձնային և վարքագծային գործոնների վերափորձարկման /ռեթեստավորման/ արդյունքները» ենթագլխում դիտարկվել են քննչական գործունեության մեջ բացահայտված կոնֆլիկտների հիմք հանդիսացող անձնային գործոնների դրսևորման փոփոխությունները ուսումնական գործնական պարապմունքներից հետո: Այնուհետև անցկացվել է ռեթեստավորման գործընթաց անձնային գործոնների էական տեղաշարժերը արձանագրելու համար: Վերափորձարկմանը մասնակցել են արձանագրման փուլի թվով 120 հետազոտվող: Այս փուլում նկատելի դարձան քննչական գործունեության մեջ կոնֆլիկտների մեղմացման հնարավորությունները: Նմանատիպ եզրակացու-

թյան ենք հանգել վերափոխարկման գործընթացում բոլոր նշված մեթոդների, տեխնիկաների և տեխնոլոգիաների կիրառման պարագայում:

Գծապատկեր 11



Կոնֆլիկտայնության հետ համահարաբերակցական կապերը

Չորրորդ՝ **«Քննչական գործընթացում կոնֆլիկտների հաղթահարման ուղիները»** գլուխը բաղկացած է 2 ենթագլխից: «Կոնֆլիկտների առաջացման պատճառները քննչական գործընթացում» և «Քննչական գործունեության սուբյեկտների անձնային և վարքագծային դրսևորումների շտկում» ենթագլուխներում կոնֆլիկտային իրադրությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քննչական գործունեության ոլորտում առաջացած կոնֆլիկտները միայն շատ քիչ դեպքերում են դրական ազդեցություն ունեցել թե՛ միջանձնային հարաբերությունների բնույթի, թե՛ աշխատանքի որակի վրա: Մնացած դեպքերում, որպես կանոն դրանք չեն հարթվել, ստեղծվել է լարվածության մթնոլորտ հակամարտող ընդդիմախոսների և ընդհանուր աշխատակազմի շրջանակներում: Քննչական գործունեության մեջ առաջացող ու զարգացող կոնֆլիկտների բնույթի ու պատճառականության վերլուծությունը, փաստում են, որ ոլորտում առկա է մշտական հետազոտությունների և պարբերաբար շտկողական աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:

Առաջադրված խնդիրների լուծման համար մեր կողմից կազմակերպվել են ուսուցողական սեմինարներ, որոնց բովանդակային հիմք են հանդիսացել մեր հետազոտությունից ստացված արդյունքները, կոնֆլիկտների կանխարգելման և հաղթահարման հիմնական ուղիներն ու մոտեցումները: Շտկողական աշխատանքների իրականացման համար կազմվել են 10 խմբեր, որոնցից մեկը բաղկացած էր 21 անդամից, մյուսները՝ 11: Ընդհանուր առմամբ սեմինար պարապմունքները շարունակվել են 5 շաբաթ, յուրաքանչյուր պարապմունքը 2.30 ժամ տևողությամբ: Նախքան ուսուցողական պարապմունքների հիմնական բովանդակային մասին անցնելը խմբերին ներկայացվել է հետազոտության արդյունքները՝ նպատակ ունենալով ցույց տալ քննչական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները:

Տեսական և փորձարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց մեկնաբանումը և ընդհանրացումը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ **եզրակացություններին.**

1. Քննչական գործունեության ոլորտում կատարվող գլոբալ փոփոխությունները հրատապ են դարձնում կոնֆլիկտային կամ խնդրահարույց իրադրությունում մարդկանց վարքի հիմնախնդիրը: Նմանատիպ վարքի համարժեքությունը և կոնֆլիկտային իրադրության հաղթահարումը հիմնականում կախված է այդ իրադրության հնարավոր պատճառների գիտակցումից և վերջինիս հաղթահարման նպատակային ու արդյունավետ միջոցների կիրառումից: Քննչական գործունեության մեջ առաջնային է համարվում համակարգի ներսում առկա փոխհարաբերությունների ուսումնասիրման, նրանց կարգավորման, դրսևորվող կոնֆլիկտների ապակառուցողական զարգացման կանխումը:

2. Քննչական գործունեության մեջ միջանձնային կոնֆլիկտները դիտարկվում են, որպես փոխներգործության ընթացքում ծագած հակասությունների ու հակազդեցությունների արդյունք: Այս ոլորտում կոնֆլիկտների առաջացմանը նպաստում են այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են՝ քննիչի գործունեության յուրատիպությունը, միջանձնային պաշտոնական և ոչ պաշտոնական փոխհարաբերությունների բնույթը, մասնագիտական և անձնային որակները: Ընդհանրացնելով, կարող ենք առանձնացնել քննչական գործունեության ոլորտում կոնֆլիկտների ծագմանը նպաստող սուբյեկտիվ և օբյեկտիվ բնույթի բախումներ: Օբյեկտիվ գործոններ են աշխատանքի պայմանները, կառուցվածքային առանձնահատկությունները, իսկ սուբյեկտիվ են այն անհատական հոգեբանական առանձնահատկությունները, որոնց միջոցով էլ հակամարտող կողմերը ընտրում են հակազդմանը պատասխանելու համապատասխան եղանակներ: Հետազոտության արդյունքները վկայում են, որ կոնֆլիկտների զարգացման պարբերականությունը պայմանավորված է բախվող կողմի անձնային առանձնահատկություններով, անձնային գործոնների արտահայտվածության բարձր կամ ցածր մակարդակներով: Որպես կանոն, կոնֆլիկտային փոխազդեցության զարգացմանն ու հաղթահարմանն ուղղված մյուս բոլոր գործոնները, միջնորդավորվում են անձնային գործոններով:

3. Հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ քննչական գործունեության մեջ դրսևորվող կոնֆլիկտները լինում են մասնավորապես «ուղղահայաց»՝ ղեկավար-ենթակա, և «հորիզոնական»՝ քննիչ-քննիչ: Նմանատիպ կոնֆլիկտների զարգացման դրդապատճառ են հանդիսանում հիմնականում անձնային գործոններն ու մասնագիտական առանձնահատկությունները:

Հիմանական խնդրահարույց գործոն են հանդիսանում ղեկավարման ոճը, մասնագիտական շահերի պաշտպանումը, աշխատանքի որակի բարձրացման համար առաջացած լարվածությունը: Կոնֆլիկտային փոխհազդեցության ժամանակ գերակա է համարվում մրցակցությունը, որն ուղեկցվում է անհարդուրժողականությամբ, վարչահրամայականությամբ ու անզիջումությամբ:

4. Հետազոտության արդյունքների վերլուծությունը հավաստում է նշանակալի համահարաբերակցական կապը բարձր կոնֆլիկտայնության և հուզական այրման միջև: Հուզական այրման հետևանքով դրսևորվող այնպիսի վարքային արձագանքներ, ինչպիսիք են՝ մի կողմից, մասնագիտական պարտականությունների կատարման գործընթացում թերացումը, անպատասխանատվության զգացումը, աշխատունակության անկումը, մյուս կողմից այս ամենն ուղեկցող բարձր տագնապայնությունն ու լարվածությունը, անհամարժեք հուզական ընտրողական հակազդումները, հոգեսոմատիկ խանգարումները զգալիորեն նվազեցնում են աշխատանքի արդյունավետությունը և հանգեցնում կոնֆլիկտների առաջացմանն ու զարգացմանը:

5.Հետազոտության արդյունքները վկայում են, կոնֆլիկտակայունության, որպես միջանձնային կոնֆլիկտների հաղթահարման, ինչպես նաև դրանց առաջացման կանխարգելման անհրաժեշտ պայմանի ձևավորվածության առկայությունը քննչական գործունեության սուբյեկտների մոտ: Ցածր կոնֆլիկտակայունությունը, անխուսափելիորեն հանգեցնում է աշխատանքի արդյունավետության կտրուկ նվազմանն ու մասնագիտական աղավաղմանը:

6.Քննչական գործունեության սուբյեկտներին կոնֆլիկտների, դրանց տեսակների, դրսևորման առանձնահատկությունների, վերջիններիս առաջացմանն ու զարգացմանը նպաստող գործոնների, ինչպես նաև դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն ու հմտությունների ձևավորումն հնարավոր է դարձնում կոնֆլիկների նվազեցումը, դրանց կառուցողական ուղղորդումը: Սա հնարավոր է երկարատև, շարունակական և գործնական միջոցառումների ձեռնարկման և կրառման պայմաններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակած հետևյալ **աշխատանքներում՝**

1.**Մկրտչյան Ռ.,** Կոնֆլիկտների հետազոտության հեռանկարներն իրավաբանական գործունեության ոլորտում, «Հոգեբանության արդի հիմնախնդիրները» գիտական աշխատությունների ժողովածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ, Երևան 2016, էջ 42-48:

2.**Մկրտչյան Ռ.,** Կոնֆլիկտների հետազոտության հեռանկարները իրավաբանական գործունեության ոլորտում, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, N 2, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան 2016, էջ 82-87:

3.**Мкртчян Р.,** Психологический аспект феноменологии конфликта, Психология и жизнь, N 3-4, Зангак, 2011, стр. 61-65.

4.**Мкртчян Р., Геворгян С.,** Межличностные конфликты в сфере организационной деятельности как предмет психологического исследования, Социальные технологии в современном обществе, Материалы VIII межвызовской научно-практической конференции, 27 октября, 2011, Санкт-Петербург, стр. 242-250.

5.**Мкртчян Р.,** Психологический аспект проблемы межличностного конфликта в контексте профессиональной деятеьности, Русский язык в Армении, N 5, Ереван 2012, стр. 33-41.

6.**Մկրտչյան Ռ., Հովհաննիսյան Ա.,** Կոնֆլիկտների դրսևորման առանձնահատկությունները քննչական գործունեության մեջ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, I պրակ, Մանկավարժ հրատ., Երևան 2013, էջ 162-165:

7.**Մկրտչյան Ռ.,** Կոնֆլիկտների առաջացման պատճառները քննչական գործունեության գործընթացում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Գիտական տեղեկագիր N 1-2 (26-27), Երևան 2016, էջ 64-75:

8.**Մկրտչյան Ռ.,** Քննիչի անձի ու նրա մասնագիտական առանձնահատկությունների որոշ ասպեկտների հոգեբանական բնութագիրը, որպես առանձնահատուկ պայմաններում գործող սուբյեկտի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Գիտական տեղեկագիր N 3-(28-29), Երևան 2016, էջ 30-39:

МКРТЧЯН РУБЕН ГЕРАСИМОВИЧ

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ КОНФЛИКТОВ В ПРОБЛЕМНЫХ СИТУАЦИЯХ (НА ПРИМЕРЕ СЛЕДСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ)

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 ,,Общая психология, теория и история психологии, психология личности".

Защита состоится 25-го мая 2017 года в 12.00 на заседании специализированного совета психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Университете им. Х.Абовяна, по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец, 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Происходящие глобальные изменения различных структур современного общества порождают разного рода конфликты между людьми. В связи с этим в обществе, а также в межличностных отношениях все более актуальной становится проблема изучения поведения людей в конфликтных ситуациях. Преодоление проблемной ситуации, а также конфликтного поведения в основном зависит от раскрытия возможных причин и эффективного использования средств их преодоления. В целях развития профессиональных способностей следователя, повышения эффективности его работы и сохранения здоровья актуальной становится организация обеспечения психогигиенических требований деятельности.

Объектом исследования являются проявляющиеся во взаимоотношениях субъектов следственной деятельности межличностные конфликтные ситуации и их особенности.

Предметом исследования являются проявления личностных и профессиональных качеств, особенностей межличностных взаимоотношений, эмоциональных переживаний, а также изменения особенностей самоуправления личности следователей в конфликтных ситуациях.

Цель исследования: изучить социально-психологические особенности проявляющихся и развивающихся межличностных конфликтов в проблемных ситуациях в сфере следственной деятельности, их обусловленность личностными факторами, причинность, а также разработать соответствующие средства их профилактики и преодоления.

Задачи исследования:

1. Изучить профессиональную литературу по проблемным ситуациям в системе следственной деятельности, теоретические основы конфликтов.
2. Выявить особенности проявления конфликтов, характерные изменения факторов, влияющих на раскрытие в следственной деятельности.
3. Систематизировать особенности межличностных взаимоотношений и поведенческих проявлений субъектов деятельности в проблемных ситуациях.

4. Выявить корреляционные связи между конфликтностью и эмоциональным выгоранием и влияние субъективных факторов.

5. Выявить причинные связи возникновения конструктивных и деструктивных конфликтов, обосновать их психологические связи в процессе преодоления.

6. Разработать методические рекомендации по профилактике и преодолению конфликтов в сфере следственной деятельности.

7. Установить эффективность профилактических и восстанавливающих работ путем подтверждающего эксперимента.

Гипотеза исследования: предполагается, что особенности конфликтов, проявляющихся во взаимоотношениях субъектов - участников проблемных ситуаций в следственной деятельности обусловлены уникальной выраженностью их личностных и профессиональных качеств, особенностями психической устойчивости следователя к стресс-факторам, саморегуляции эмоциональных состояний.

Предполагается также, что существующие взаимодействия между конфликтностью и эмоциональным выгоранием субъектов следственной деятельности имеют прямую зависимость от личностных особенностей следователя.

Теоретическая значимость исследования. В наши дни психологическая наука, а также ее сферы - психология управления, юридическая психология, психологическая конфликтология находятся на стадии становления. Концептуальная разработка проблемы и исследование социально-психологических закономерностей, выявление характера, возникновения и типологии конфликтов в сфере следственной деятельности являются еще одной попыткой обогащения психологической концепции конфликта.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть использованы для разрешения конструктивных и прикладных задач в конфликтных ситуациях сферы следственной деятельности, а также для формирования навыков управления психической сферы и саморегуляции эмоциональных явлений личности следователя.

Научная новизна исследования. Исследовательским путем были выявлены проблемные ситуации в сфере следственной деятельности и социально-психологическая причинность существующих в них конструктивных и деструктивных конфликтов, характер возникновения конфликтов, обусловленных личностными особенностями, скрытые тенденции их трансформации и направленность развития. Выявлена существующая корреляционная связь между личностными факторами, способствующими происхождению, развитию и преодолению конфликтов в проблемных ситуациях .

По теме диссертации опубликовано 8 статей.

RUBEN G. MKRTCHYAN

PSYCHOLOGICAL FEATURES OF CONFLICT MANIFESTATION IN PROBLEM SITUATIONS (ON RESEARCH ACTIVITY BASIS)

Thesis submitted for the Degree of Candidate of Psychological Sciences in the field of expertise: 19.00.03 "Social Psychology, (Interpersonal relationship, Family, Age, Pedagogical, and Group activities)". The official (public) defence of the thesis will take place at Higher Attestation Commission's 064 Degree-awarding Scientific Council's session on May 25, 2017, at 12:00 at Khachatur Abovian Armenian State Pedagogical University (ASPU)

(Address: 0010 Yerevan, Tigran Mets 17).

Open access to the dissertation at the Library of Khachatur Abovian Armenian State Pedagogical University. The summarized-version copies of the thesis were distributed on April 25, 2017.

SUMMARY

Actual relevance of research. The ongoing global changes in various structures of modern society give rise to all sorts of conflicts. In this regard, the problem of studying people's behaviour in conflict situations is becoming more urgent in the society, as well as in interpersonal relations. Overcoming the problem situation, as well as conflict behaviour, mainly depends on the disclosure of possible causes and the effective use of means to apply. In order to develop the professional abilities of investigator, to increase the efficiency of his work and maintain health, it becomes urgent to develop targeted setting for psychohygiene requirements.

The object of the research is to explore into the interpersonal conflict situations between subjects of investigative activities relationship and their features.

The subject of the research is to expose the personal and professional qualities, features of interpersonal relationships, emotional experiences, as well as the respective changes in the features of investigator's personal self-governance in conflict situations.

The aim of the research is to study the social-psychological characteristics of interpersonal conflicts manifestation and development in problem situations in the field of research activities, as well as the preconditioning factors of personal influence, causality, as well as to develop appropriate means for their prevention and persistence.

Research objectives are as follows:

1. To study the professional literature on subject matter issues within the system of research activities, as well as theoretical bases of conflicts;
2. To identify the features of manifestation of conflicts, the characteristic changes of factors affecting disclosure in investigative activities;
3. To systematize the features of interpersonal relationships and behavioural manifestations of subjects of activities in problem situations;
4. To identify the correlation between conflict and occupational burnout and the influence of subjective factors;

5. To identify the causal relationships of emergence of constructive and destructive conflicts arguing their psychological relation in overcoming the issues;

6. To develop the methodological recommendations on the prevention and overcoming of conflicts in the sphere of research activities;

7. To establish the effectiveness of preventive and restorative work through a confirmatory experiment.

The hypothesis postulated: As it is assumed, the specifics of conflicts manifested in the relationships of subject-participants in problematic situations in research activities condition the unique expression of their personal and professional qualities, peculiarities of psychological stability of investigator to stress factors, self-regulation of emotional states.

It is also assumed that the existing interactions between conflict and occupational burnout of investigative subjects are directly dependent on investigator's personal characteristics.

The theoretical input of the research: Nowadays, Psychological Sciences, as well as, its subfields – Psychology of Management, Psychology of Law, and Psychological Conflictology – is at formation stage. The conceptual development of problem and study of socio-psychological patterns, the identification of the nature, origin and typology of conflicts in the sphere of investigative activity have resulted in another attempt at enriching the psychological concept of conflict.

The practical contribution of the research: The research results can be used to resolve constructive and applied problems in conflict situations in the sphere of investigative activity, as well as to develop management skills of the mental sphere and self-regulation of the emotional phenomena of the investigator's personality.

The innovative approaches and actual novelty of the research: The research revealed problematic situations in the sphere of research activities and the socio-psychological causality of constructive and destructive conflicts detected, the nature of conflicts emergence caused by personal characteristics, the hidden tendencies of their transformation and the direction of development. The research identified the existing correlation between personal factors contributing to the origin, development and overcoming the conflicts in problem situations.

8 articles are published on the topic covered in the dissertation.